Աստուծոյ ընակեալ է ի ձեզ» են։ Ա. Կորնթ. Գ. 16[1])։

Զ. Բողոքում են, թէ Հայոց եկեղեցին երկար պահք է սահմանել ժողովրդեան համար, և ընդհանրապէս պահքը աւելորդ են համարում։ Զեն յիշում, որ պահքը՝ թէ արտաքինը՝ որ կերակրոց խարութեան համար է և թէ ներքինը՝ որ կամքն ու կիրքը սանձահարելու համար է, Սուրբ Գիրքն է սահմանել ժողովրդեան հոգեւոր և մարմնաւոր օգտի համար։ Զէ՞ որ Քրիստոս ասաց. «Այս ազգ (ախտ, տկարութիւն, ցաւ, փորձիչ, փորձառութիւն եւայլն), ոչ իւիք ելանէ, հեռանայ ի մարդոյ, եթէ ոչ պահօք և աղօթիւք»։ Զէ՞ որ Առաքեալք ամեն հրաշք և հոգեւոր պաշտօն կատարելուս «պահէին»։

Հարկ չեմ համարում Սուրբ Գրքից շատ վկայութիւններ բերել ընթերցողաց համար, այլ հրաւիրում եմ կարդալ Աւետարանի մեկնութիւնը և կրօնագիտութեան գրքերը։

Է. Բողոքում են թէ՝ ինչու տգէտ քահանայք են ձեռնադրում, որ ժողովրդեանը չեն կարողանում հոգեւոր սնունդ և բաւականութիւն տալ։

Այս մասին երկար է խօսել, և հոգեւոր իշխանութիւնը աշխատում է առաջն առնել, եթէ հնար է, ամեն քաղաք և գիւղ ուսեալ և ուսուցիչ քահանայք ուղարկել։ Աստուած յաջողէ։

Ը. Բողոքում են, թէ ինչու վերջնականապէս չեն կանոնադրւում Հաս ու Շհասի գործն ու խնդիրը, որ այնքան ցաւեցնում է ժողովրդոց և զբաղեցնում շատերին։

Այս մասին կարդալ Ղեւոնդեանց ԺԸ գլուխը և «Ցեղագիր Գեղարքունեաց», 1895, յերես 441 և 442։

Թ. Բողոքում են թէ ինչու այրի քահանայից խնդիրը չէ որոշում հոգեւոր իշխանութիւնը, որ ժողովրդեանը դայթակղութեան պատճառ չլինին, և բողոքներով չձանձրացնեն ժողովուրդը հոգեւոր իշխանութեանը։

Ժ. Բողոքում են եկեղեցական արտաքին հանդէսների և

---

[1])Այս և միւս մասն գրուածոց վերաբերեալն կարդա՛ «Ցեղագիր Գեղարքունի գաւառի» մեր գիրքը, յԷջմիածին, 1895 յերես 615 և 616։